



ՀԱՎԵԼՎԱԾ*

« փաստաբանների պալատի խորհրդի
15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ
հաստատված Որակավորման քննության
ընդունման և հանձնման կարգի



**ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊԲԵՐՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ
Կ Ա Ր Գ**

ք. Երևան, 2020թ.

* հավելվածը լրացվել է « փաստաբանների պալատի խորհրդի 08.04.2020թ. թիվ 7/6-Լ որոշմամբ

I. Ընդհանուր դրույթներ

1. Արտակարգ դեպքերում որակավորման քննության ընդունման և հանձնման սույն կարգով (**այսուհետ՝ Կարգ**) կարգավորվում են միայն արտակարգ դեպքերում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) որակավորման քննություն ընդունելու և հանձնելու հետ կապված հարաբերությունները, եթե ընդհանուր կարգով հնարավոր չէ լիարժեք կազմակերպել որակավորման քննությունը:

2. Կարգի իմաստով արտակարգ դեպքեր են համարվում՝

- արտակարգ դրությունը.
- ռազմական դրությունը.
- համաճարակի կամ արտակարգ բնույթ կրող այլ անկանխելի պատճառով անձանց տեղաշարժի կամ անմիջական շփումների սահմանափակումները:

3. Կարգը կիրառելի է «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) ավարտական փաստաթուղթ ստացած այն շրջանավարտների նկատմամբ (**այսուհետ՝ Հավակնորդ**), որոնք դիմում են ներկայացրել սույն կարգին համապատասխան որակավորման քննությունը հանձնելու վերաբերյալ:

4. Կարգին համապատասխան որակավորման քննությունը հանձնելու դիմում չներկայացրած Հավակնորդներն իրավունք ունեն մասնակցելու ընդհանուր կարգով կազմակերպվող հերթական որակավորման քննությանը:

5. Որակավորման քննության (այդ թվում՝ վերահանձնման) կազմակերպման և անցկացման ժամանակացույցը (**այսուհետ՝ Ժամանակացույց**), ինչպես նաև դիմումի և քննության համար անհրաժեշտ այլ ձևաթղթերը սահմանում է Պալատի որակավորման հանձնաժողովի (**այսուհետ՝ Հանձնաժողով**) նախագահը:

6. Որակավորման քննության անցկացման, ինչպես նաև Կարգի հետ կապված այլ հարցերի վերաբերյալ նամակագրությունը հավակնորդների հետ իրականացվում է **միայն էլեկտրոնային փոստի միջոցով**, հավակնորդի՝ որակավորման քննության մասնակցության դիմումի մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրություն ուղարկելու եղանակով: Ծանուցմանը կարող է փոխարինել նաև ՀՀ փաստաբանների պալատի կայքում (www.advocates.am) հրապարակված ծանուցումը:

7. Սահմանված ձևաթղթով դիմումը լրացված և ստորագրված վիճակում հավակնորդը ուղարկում է Պալատի info@advocates.am էլեկտրոնային հասցեին՝ էլեկտրոնային նամակի վերնագրում (subject) նշելով «որակավորման քննություն» բառերը: Սույն կետում նշված դիմումի հիման վրա Պալատը լիազորվում է Փաստաբանական դպրոցից ստանալու հավակնորդին առնչվող բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ ավարտական հավաստագիրը, դիպլոմի պատճենը, անձնագրի պատճենը և այլ անձնական տվյալներ):

II. Որակավորման քննության ընդհանուր պահանջները

8. Որակավորման քննությանը կարող են մասնակցել ժամանակացույցում նշված ժամկետում սահմանված ձևի դիմում ներկայացրած հավակնորդները:

9. Հեռավար կարգով որակավորման քննությանը թույլատրվում է միայն այն

հավակնորդների մասնակցությունը, որոնք կարող են ապահովել հետևյալ պայմանները՝

- 1) առանձին սենյակ (**այսուհետ՝ Քննասենյակ**).
- 2) համակարգիչ՝ տեսախցիկի առկայությամբ.
- 3) համացանցի հասանելիություն.
- 4) Փաստաբանական դպրոցի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցե.
- 5) Փաստաբանական դպրոցի տեխնիկական օժանդակություն ցուցաբերող աշխատակցի (**այսուհետ՝ մասնագետ**) ուղարկած ծրագրի առկայություն համակարգչում:

(կեդր լրացվել է 08.05.2020թ. թիվ 10/5-L որոշմամբ)

10. Որակավորման քննությունը կազմակերպվում է հեռավար հաղորդակցման միջոցների օգտագործմամբ, բացառությամբ սույն կարգում նշված դեպքի:

(կեդր լրացվել է 08.05.2020թ. թիվ 10/5-L որոշմամբ)

11. Հավակնորդը որակավորման քննությունը հանձնում է ժամանակացույցում նշված **քննության օրը** և **առանձին ծանուցմամբ նշված ժամին**, իր բնակության կամ այլ վայրից՝ լրացնելով Հանձնաժողովի կողմից իրեն տրամադրված **1 (մեկ) թեստային առաջադրանք**: Թեստային առաջադրանքների կազմման աշխատանքները կազմակերպում է Հանձնաժողովի նախագահը՝ ապահովելով դրանց գաղտնիությունը: Տարբեր ժամերին հրավիրված հավակնորդների խմբերին տրամադրվում են տարբեր թեստային առաջադրանքներ: Որպես կանոն, խմբերը բաժանվելու են ըստ մասնագիտական ուղղվածության և ըստ հավակնորդների որոշակի քանակի:

12. Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը որակավորման քննությունը կազմակերպում են Պալատի վարչական շենքից՝ ապահովելով իրենց ներկայությունը:

13. Որակավորման քննության նյութատեխնիկական աջակցությունն ապահովում է Փաստաբանական դպրոցը:

III. Հեռավար կարգով որակավորման քննության գործընթացը

(վերնագիրը փոփոխվել է 08.05.2020թ. թիվ 10/5-L որոշմամբ)

14. Որակավորման քննությանը մասնակցող հավակնորդը քննասենյակում քննության ամբողջ ընթացքում պետք է՝

- 1) լինի միայնակ, ինչպես նաև համակարգչի մոտից չհեռանա (անկախ պատճառից).
- 2) համակարգչի առջև նստի մեջքով դեպի քննասենյակի մուտքը՝ այն հաշվարկով, որ տեսախցիկը մշտապես տեսանկարահանի իրեն և քննասենյակի մուտքը, ինչպես նաև միացրած լինի համակարգչի խոսափողը.
- 3) մասնագետի ցուցումներին համապատասխան ապահովի համակարգչի էկրանը հեռավար կարգով դիտելու հնարավորությամբ.
- 4) Հանձնաժողովի նախագահի կամ անդամի պահանջով տեսախցիկով ցույց տա քննասենյակի այլ հատվածները.
- 5) չօգտվի հեռախոսից, այլ համակարգչից, ինչպես նաև այլ տեխնիկական միջոցներից.

- 6) չօգտվի իրավական ակտերից, գրականությունից կամ այլ նյութերից.
- 7) չհաղորդակցվի քննության հարթակի մյուս մասնակիցների հետ.
- 8) ժամանակին կատարի քննության հետ կապված մյուս պահանջները:

15. Սույն կարգի 14-րդ կետում նշված որևէ պահանջի խախտման դեպքում, ինչպես նաև որևէ պատճառով Հավակնորդի հետ կապը խափանվելու դեպքում (համացանցի հասանելիության դադարեցում, տեսախցիկի կամ խոսափողի անջատում և այլն) Հավակնորդը համարվելու է որակավորման քննությունը չհանձնած:

16. Որակավորման քննության ողջ ընթացքում Հանձնաժողովի նախագահը, անդամը կամ աշխատակազմի ներկայացուցիչը՝

- 1) հատուկ ծրագրի միջոցով դիտելու է հավակնորդի համակարգչի էկրանի վրա տեղի ունեցող գործողությունները, ինչպես նաև՝
- 2) քննության հարթակի միջոցով դիտելու է հավակնորդի գործողությունները՝ Հավակնորդի համակարգչի տեսախցիկի միջոցով:

17. Սույն կարգի 16-րդ կետում նշված հավակնորդի գործողությունները և հավակնորդի համակարգչի էկրանը կարող են տեսաձայնագրվել:

18. Նախապես հայտարարված ժամին հավակնորդները պարտավոր են համակարգիչներով միանալ քննության հարթակին:

19. Քննության հարթակին միացած հավակնորդների հետ մասնագետը կարգավորում է տեխնիկական հարցերը:

20. Հանձնաժողովի նախագահի կողմից քննությունը սկսված հայտարարելուց հետո էլեկտրոնային փոստի միջոցով հարթակին միացած հավակնորդներին ուղարկվում է թեստային առաջադրանքը:

21. Հարթակին միացած հավակնորդները թեստային առաջադրանքը ստանալու պահից 30 (երեսուն) րոպեի ընթացքում, էլեկտրոնային եղանակով կատարում են իրենց նշումները՝ ըստ թեստային առաջադրանքի, պահպանում են ֆայլը և նույն փոստի միջոցով ուղարկում են Հանձնաժողովին (նույն էլեկտրոնային հասցեին): Առաջադրանքն ավարտելու և էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելու ժամանակը չպետք է գերազանցի 3 (երեք) րոպեն: Սահմանված ժամանակից հետո հավակնորդի կողմից ուղարկված թեստային առաջադրանքի պատասխանները չեն ընդունվելու, իսկ **հավակնորդը համարվելու է որակավորման քննությունը չհանձնած:**

III՝ Հեռավար կարգով որակավորման քննությունը հանձնելու հնարավորություն չունեցող անձանց որակավորման քննության կազմակերպումը

(գլուխը լրացվել է 08.05.2020թ. թիվ 10/5-L որոշմամբ)

21՝ Հեռավար կարգով որակավորման քննությունը հանձնելու հնարավորություն չունեցող և սույն կարգի 7-րդ կետում նշված ձևաթղթի դիմումում համապատասխան նշում կատարած հավակնորդների որակավորման քննությունը կարող է կազմակերպվել Փաստաբանների պալատի (Փաստաբանական դպրոցի) վարչական շենքում՝ ապահովելով հետևյալ պայմանները՝

- 1) մեկ լսարանում միաժամանակ քննություն հանձնող հավակնորդների քանակ չի կարող գերազանցել 9 անձը.

2) քննություն հանձնող հավակնորդների միջև հեռավորությունը պետք է կազմի առնվազն 1,5 մետր.

3) քննություն հանձնող հավակնորդները պետք է շենքում և քննության ամբողջ ընթացքում կրեն դիմակներ և ձեռնոցներ:

21² Սույն կարգի 21¹ կետով սահմանված դեպքում որակավորման քննությանը մասնակցող հավակնորդը պետք է ներկայանա անհատական ծանուցման մեջ նշված օրը և ժամին՝ անձը հաստատող փաստաթղթով: Որակավորման քննությունից ուշացած կամ առանց անձը հաստատող փաստաթղթի ներկայացած հավակնորդին չի թույլատրվելու մասնակցել որակավորման քննությանը:

21³ Հավակնորդներն իրենց աշխատասեղաններն ընտրում են վիճակահանության միջոցով:

21⁴ Թեստային առաջադրանքը հավակնորդը լրացնում է համակարգչով, որից հետո այն տպում է մեկ օրինակ, տպագրված առաջադրանքի վրա գրում է իր անունը, ազգանունը, ստորագրում է այն և հանձնում հանձնաժողովի անդամին:

21⁵ Հավակնորդին չի թույլատրվում որևէ պատրվակով լքել որակավորման քննության սենյակը, իսկ քննական սենյակն ինքնական լքած հավակնորդը համարվում է որակավորման քննությունը չհանձնած:

21⁶ Քննությունը սկսված համարվելու պահից 30 րոպեի ընթացքում հավակնորդները էլեկտրոնային եղանակով կատարում են իրենց նշումները և տպում առաջադրանքը: Եթե հավակնորդը քննությունը սկսված համարվելուց 30 րոպե հետո առաջադրանքը չի հանձնում Հանձնաժողովի անդամին, ապա տվյալ հավակնորդը համարվում է որակավորման քննությունը չհանձնած:

21⁷ Քննության ամբողջ ընթացքը և համակարգիչների էկրանները կարող են տեսաձայնագրվել:

21⁸ Սույն կարգի մյուս գլուխների պահանջները տարածվում են նաև սույն գլխով սահմանված կարգով քննություն հանձնող հավակնորդների նկատմամբ:

IV. Որակավորման քննության առաջադրանքը և գնահատման չափանիշները

22. Թեստային առաջադրանքը (**այսուհետ՝ նաև թեստ**) կազմված է **10 (տասը) հարցից՝**

1) **4 հարցը՝** Փաստաբանի վարքագծի կանոնագրքից (**առաջին բաղադրիչ**).

2) **6 հարցը՝** ըստ հավակնորդի մասնագիտական ուղղվածության՝ քաղաքացիաիրավական, վարչաիրավական կամ քրեաիրավական (**երկրորդ բաղադրիչ**):

23. Մասնագիտական (երկրորդ բաղադրիչի)՝

1) **քաղաքացիաիրավական ուղղվածության** հարցերը որպես կանոն առնչվելու են Փաստաբանական դպրոցի ուսումնական ծրագրերում ներառված հետևյալ թեմաներին՝

1.1) Ապացույցները և ապացուցման գործընթացը քաղաքացիական դատավարությունում - **1 (մեկ) հարց**.

1.2) Ներկայացուցչությունը աշխատանքային վեճերով - **1 (մեկ) հարց**.

1.3) Ներկայացուցչությունը գործարքների անվավերությանը և դրա

հետևանքներին վերաբերող վեճերով - **1 (մեկ) հարց.**

1.4) Դատավարական փաստաթղթերի (հայցադիմումի և պատասխանի) կազմման գործնական առաջարկություններ - **1 (մեկ) հարց.**

1.5) Բողոքարկումը քաղաքացիական դատավարությունում (գործնական հմտություններ) - **1 (մեկ) հարց.**

1.6) Պարտավորական հարաբերություններից ծագած վեճերով գործնական առաջարկություններ - **1 (մեկ) հարց.**

2) **վարչահրավական ուղղվածության** հարցերը որպես կանոն առնչվելու են Փաստաբանական դպրոցի ուսումնական ծրագրերում ներառված հետևյալ թեմաներին՝

2.1) Ներկայացուցչությունը վարչական դատավարությունում - **2 (երկու) հարց.**

2.2) Ներկայացուցչությունը վարչական վարույթում - **2 (երկու) հարց.**

2.3) Ապացույցները և ապացուցման գործընթացը քաղաքացիական դատավարությունում - **1 (մեկ) հարց.**

2.4) Անհատական դիմումի քննության վարույթը ՀՀ սահմանադրական դատարանում - **1 (մեկ) հարց.**

3) **քրեահրավական ուղղվածության հարցերը** որպես կանոն առնչվելու են Փաստաբանական դպրոցի ուսումնական ծրագրերում ներառված հետևյալ թեմաներին՝

3.1) Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ - **1 (մեկ) հարց.**

3.2) Արդար դատաքննությունը, ազատությունն ու անձնական անձեռնմխելիությունը ՄԻԵԿ լույսի ներքո - **1 (մեկ) հարց.**

3.3) Խափանման միջոց կալանք ընտրելու միջնորդության քննարկման ընթացակարգերը առաջին ատյանի դատարանում և դատական ակտի բողոքարկումը - **1 (մեկ) հարց.**

3.4) Պաշտպանի մասնակցությունը քննչական և այլ դատավարական գործողությունների կատարմանը - **1 (մեկ) հարց.**

3.5) Վերաքննիչ և վճռաբեկ բողոք կազմելու գործնական հմտություններ - **1 (մեկ) հարց.**

3.6) Քրեական գործերով ապացույցների ձեռքբերում. ապացույցների անթույլատրելիությունը, վերաբերելիությունն ու հավաստիությունը - **1 (մեկ) հարց:**

Ըստ անհրաժեշտության սույն կետում նշված հարցերը կարող են փոփոխվել՝ Փաստաբանական դպրոցի ուսումնական ծրագրերում ներառված այլ թեմաների շրջանակներում կազմված հարցերով:

24. Թեստի յուրաքանչյուր հարց ունի **4 (չորս)** այլընտրանքային պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ պատասխան համարվում, իսկ մյուսները՝ սխալ են կամ ճիշտ պատասխանի համեմատությամբ՝ ոչ լիարժեք, որոնք նույնպես որակվում են որպես սխալ պատասխաններ:

25. Թեստի ճիշտ պատասխանը կարող է տառացի չհամընկնել իրավական ակտի շարադրանքին:

26. Թեստային հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է **2 (երկու) միավոր**, իսկ սխալ պատասխանին միավոր չի տրամադրվում:

27. Որակավորման քննությունը հանձնաձև է համարվում այն հավակնորդը, ով ստացել է առնվազն **12 (տասներկու) միավոր (այսուհետ՝ անցողիկ միավոր)**, այդ թվում՝

- 1) առաջին բաղադրիչից ստացել է առնվազն **4 (չորս)** միավոր, և
- 2) երկրորդ բաղադրիչից ստացել է առնվազն **8 (ութ)** միավոր.

28. Որակավորման քննությունը չհանձնաձև հավակնորդը վերստին որակավորման քննություն հանձնելու համար պարտավոր է փաստաբանական դպրոցում անցնել հատուկ ծրագրով ուսուցում՝ որակավորման քննությունը չհանձնաձև բաղադրիչից:

29. Երկրորդ անգամ որակավորման քննություն չհանձնաձև հավակնորդը վերստին կարող է մասնակցել որակավորման քննությանը ՀՀ փաստաբանական դպրոցում ընդհանուր հիմունքներով կրկին ուսուցում անցնելու դեպքում:

V. Վերահանձնման որակավորման քննությունը

30. Հատուկ ծրագրով ուսուցումն ավարտած հավակնորդների համար ողջամիտ ժամկետում կազմակերպվելու է վերահանձնման որակավորման քննություն:

31. Որակավորման քննությունը առաջին բաղադրիչից չհանձնաձև հավակնորդներին վերահանձնման թեստային առաջադրանքը լուծելու համար տրամադրում է 10 (տասը) րոպե ժամանակ:

32. Որակավորման քննությունը երկրորդ բաղադրիչից չհանձնաձև հավակնորդներին վերահանձնման թեստային առաջադրանքը լուծելու համար տրամադրվում է 20 (քսան) րոպե ժամանակ:

33. Հավակնորդը համարվելու է վերահանձնման որակավորման քննությունը առաջին բաղադրիչից հանձնաձև 4 (չորս) հարցից բաղկացած թեստային առաջադրանքի առնվազն 3 (երեք) հարցին ճիշտ պատասխանելու դեպքում:

34. Հավակնորդը համարվելու է վերահանձնման որակավորման քննությունը երկրորդ բաղադրիչից հանձնաձև 6 (վեց) հարցից բաղկացած թեստային առաջադրանքի առնվազն 4 (չորս) հարցին ճիշտ պատասխանելու դեպքում:

35. Վերահանձնման որակավորման քննությունը կազմակերպվելու և գնահատվելու է սույն կարգի պահանջներին համապատասխան:

36. Այն դեպքում, երբ վերահանձնման ժամանակ արտակարգ դեպքերի ազդեցությունը վերացել է, ապա վերահանձնման քննությունը կարող է կազմակերպվել Փաստաբանների պալատի (Փաստաբանական դպրոցի) գտնվելու վայրում:

VI. Հանձնաժողովի աշխատանքը

37. Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին է ուղարկում ժամանակացույցը, ինչպես նաև առանձին խմբերի թեստային առաջադրանքների ժամերը և քննության հարթակին միանալու հղումը (հղումները):

38. Որակավորման քննության ավարտից հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի քարտուղարը ստացված թեստային առաջադրանքները նախնական գնահատում է և գնահատման թերթիկի հետ միասին նիստից առնվազն մեկ օր առաջ տեղադրում է Հանձնաժողովի համար

ստեղծված dropbox էլեկտրոնային պահոցում (**այսուհետ՝ Պահոց**):

39. Որակավորման քննության արդյունքներն ամփոփելու նիստը կարող է անցկացվել առցանց ձևով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կամ հեռահաղորդակցության միջոցներով՝ Հանձնաժողովի անդամների անմիջական մասնակցությամբ: Որակավորման քննության արդյունքներն ամփոփելու նիստը կարող է անցկացվել նաև հարցման միջոցով՝ Պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի (**այսուհետ՝ Ընդհանուր կարգ**) 24-րդ և 25-րդ կետերին համապատասխան: Ընդհանուր կարգը կիրառվում է նաև՝ 1) սույն կարգի III՝ գլխի պահանջների համաձայն որակավորման քննություն հանձնող հավակնորդների նկատմամբ՝ Ընդհանուր կարգի 66-րդ, 67-րդ, 68-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ և 72-րդ կետերի մասով, ինչպես նաև 2) դիտորդներ ներգրավելու հարցերով՝ Ընդհանուր կարգի դիտորդներին (դիտորդական կազմակերպություններին) վերաբերող կանոնների մասով:

(կեղը լրացվել է 08.05.2020թ. թիվ 10/5-Լ որոշմամբ)

40. Որակավորման քննության արդյունքների ամփոփման արդյունքում Հանձնաժողովը յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ կայացնում է որոշում՝

- 1) որակավորման քննությունը հանձնած համարելու և վկայագիր հանձնելու մասին, եթե հավակնորդը ստացել է սույն կարգի 27-րդ կետով (1-ին և 2-րդ ենթակետերով) սահմանված անցողիկ միավոր, կամ
- 2) որակավորման քննությունը չհանձնած համարելու մասին, եթե հավակնորդը չի ստացել սույն կարգի 27-րդ կետով (1-ին և 2-րդ ենթակետերով) սահմանված անցողիկ միավոր:

41. Որակավորման քննությունը հանձնած հավակնորդների վերաբերյալ Հանձնաժողովը կարող է կայացնել մեկ միասնական որոշում:

42. Որակավորման քննության արդյունքների մասին հավակնորդներին տեղեկացնում է Հանձնաժողովի քարտուղարը կամ աշխատակազմը՝ էլեկտրոնային փոստով անհատական գրություն ուղարկելու միջոցով: Որակավորման քննությունը չհանձնած հավակնորդին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է Հանձնաժողովի որոշումը:

43. Որակավորման քննությունը հանձնած հավակնորդներին վկայագրերը կարող են ուղարկվել էլեկտրոնային փոստի միջոցով (վկայագրերի բնօրինակները հավակնորդները հետագայում կարող են Պալատից ստանալ):

44. Հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմում է Հանձնաժողովի քարտուղարը:

45. Որակավորման քննության արդյունքների մասին Պալատի կայքում հրապարակվում են միայն ընդհանուր տեղեկություններ՝ առանց հավակնորդների անունները նշելու:

VII. Որակավորման քննության արդյունքների բողոքարկումը

46. Որակավորման քննության արդյունքները կարող են բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին կամ դատարան՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

47. Խորհրդի նիստերը վարում և որոշումները ստորագրում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալը (**այսուհետ՝ Նախագահող**):

48. Հավակնորդը Խորհրդին հասցեագրված բողոքի մեջ նշում է՝

- 1) իր անունը, ազգանունը, բնակության հասցեն, էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարը և մասնագիտական ուղղվածությունը.
- 2) թեստային առաջադրանքի այն հարցը, որը բողոքարկվում է.
- 3) բողոքի հիմնավորումները.
- 4) բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը և էջերի քանակը, դրանց առկայության դեպքում:

49. Սույն կարգի 48-րդ կետում սահմանված պահանջներին բավարարող բողոքը Նախագահողը ներկայացնում է Խորհրդի քննարկմանը:

50. Սույն կարգի 48-րդ կետում սահմանված պահանջներին չբավարարող բողոքը Նախագահողն առանց նիստ գումարելու իր որոշմամբ վերադարձնում է հավակնորդին: Հավակնորդը կարող է Նախագահողի որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում շտկել թերությունները և կրկին դիմել Խորհրդին:

51. Խորհուրդը բողոքի քննությունն իրականացնում է այն ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում (այդ թվում՝ հեռավար (առցանց) կարգով)՝ առանց հավակնորդին նիստին հրավիրելու:

52. Քննելով բողոքը՝ Խորհուրդը կարող է ընդունել որոշում՝

- 1) բողոքը մերժելու մասին, կամ
- 2) բողոքն ամբողջովին կամ մասնակի բավարարելու մասին:

53. Բողոքն ամբողջովին կամ մասնակի բավարարելու մասին որոշում կայացնելու դեպքում Խորհուրդը կարող է, որպես հետևանքների վերացման ածանցյալ լուծում՝

- 1) բարձրացնել հավակնորդի միավորները՝ հավակնորդին համարելով որակավորման քննությունը հանձնած, եթե միավորների բարձրացման արդյունքում հավակնորդը բավարարելու է Կարգի 27-րդ կետի, իսկ վերահանձնման որակավորման քննության դեպքում՝ 33-րդ և 34-րդ կետերի պահանջները, կամ
- 2) բարձրացնել հավակնորդի միավորները՝ հավակնորդին համարելով որակավորման քննությունը չհանձնած, եթե միավորների բարձրացման արդյունքում հավակնորդը չի բավարարելու Կարգի 27-րդ կետի, իսկ վերահանձնման որակավորման քննության դեպքում՝ 33-րդ և 34-րդ կետերի պահանջները:

VIII. Եզրափակիչ դրույթներ

54. Սույն կարգը գործում է նաև այն դեպքում, երբ որակավորման քննության անցկացման օրն արտակարգ դեպքի ազդեցությունը վերացել է: Սույն կետում նշված դեպքում, որակավորման քննությունը կարող է կազմակերպվել Փաստաբանների պալատի (Փաստաբանական դպրոցի) գտնվելու վայրում:

55. Սույն կարգին համապատասխան կազմակերպվող և անցկացվող որակավորման քննության նկատմամբ Ընդհանուր կարգը չի գործում, բացառությամբ սույն կարգի 39-րդ կետում նշված դեպքերի:

(կերը փոփոխվել է 08.05.2020թ. թիվ 10/5-Լ որոշմամբ)